ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

,,ՊԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/01,,

ք. Երևան 08.06 2020թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՄՇԻՆ,, ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Գրիգոր Մեղրակյանի, որը գործում է ,,ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՄՇԻՆ,, ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **վարչական շենքին կից բակային կանաչապատ տարածքի ոռոգման համակարգի վերակառուցման և նորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է **պայմանագրի կնքման պահից 45 օրվա ընթացքում, գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:**

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է՝ այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմանի հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8262012 (ութ միլիոն երկու հարյուր վաթսուներկու զար տասներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն	,,ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍԾԻՆ,, ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47	Ք. Երևան, Կ. Ուլնեցու փ. 59/5, տար. 9,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2473604386150050,
900011021962	,Արդշինբանկ ՓԲԸ,
00183253	ՀՎՀՀ 02266448,
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	Գլխավոր տնօրեն՝
---------- Անի Բաղդասարյան	---------- Գրիգոր Սեղրակյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

08.06.2020 թ.

„ՊՎԾ-ԳՀԱՇՁԲ-20/01„ ծածկագրով պայմանագիր

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Փ	CPV	Գնման առարկան	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	45241160/1	ՀՀ պետական վերահսկողական ծառայության վարչական շենքին կից բակային կանաչապատ տարածքի ոռոգման համակարգի վերակառուցման և նորոգման աշխատանքներ	ՀՀ պետական վերահսկողական ծառայության վարչական շենքին կից բակային կանաչապատ տարածքի ոռոգման համակարգի վերակառուցման և նորոգման աշխատանքներ. 1. ՊՎԾ բակային տարածքում (ընդհանուր 1,8 հա) նախատեսված է կաթիլային և ցնցուղային ոռոգման համակարգ, որը աշխատելու է ավտոմատ կերպով: 2. Ջրի ռեզերվուարը և պոմպը տեղադրվելու են կաթսայատան հարակից տարածքում, այս աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ են եռաֆազ հոսանք և մաքուր ջրի կետ՝ ռեզերվուարը լիցքավորելու համար: 3. Խողովակները լինելու են պոլիէթիլենային բարձր խտությամբ՝ PE100, 10մթն: Խողովակների միացումները լինելու են եռակցվող և կոմպրեսիոն ամրակցմամբ: Ցնցուղները պլաստմասե, ջրելու շառավիղը՝ 1.8մ/2.4մ/3մ/3.7 մ, առաջարկվող գործառնական ճնշում՝ 2.1մթն., ջրում ցանկացած անկյան տակ, ջրման շառավիղը 25% նվազեցնելու հնարավորությամբ և էլեկտրական ավտոմատ կարգավորվող սարքավորումներով: 4. Պոմպը՝ 100-200լ/ր թողունակությամբ, ջրի մղման բարձրությունը 70-40մ ու կաթիլային խողովակաշարերը՝ 16 մմ տրամագծով, 30սմ հեռավորությամբ գործարանային 1,8լ/ժ թողունակությամբ կաթոցիկներով: 5. Ոռոգման յուրաքանչյուր գոտում (ընդհանուր 12 գոտի) համակարգը պետք է աշխատի 1-2 անգամ 10-ական րոպեով՝ բացառությամբ կաթիլային համակարգից, որը պետք է աշխատի 30-60 րոպե՝ կախված	դրամ	8262012	1	Ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագրի կնքման պահից 45 օրվա ընթացքում

			եղանակային պայմաններից: Կցված գծագրում նշված է, թե որ հատվածն է կաթիլային և որը ցնցուղային ոռոգման ենթակա: Մայր խողովակաշարի վրա նախատեսված են հիդրանտներ, որոնց շնորհիվ հնարավոր կդառնա ռետինե խողովակների միջոցով մշտապես օգտագործել ջուրը՝ բակային տարածքի մաքրման աշխատանքների, ինչպես նաև լրացուցիչ ոռոգման աշխատանքներ իրականացնելու համար: 6. Նախատեսված է ասֆալտբետոնային որոշ հատվածների քանդման աշխատանքներ, իսկ այդ հատվածների վերականգման (ասֆալտապատման աշխատանքները ներառված չեն: Աշխատանքները կատարվելու են համաձայն կից ծավալաթերթ-նախահաշվի և նախագծի (կցվում է): Վերոգրյալ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռք բերումը, տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների ապահովումը կատարվում է Կատարողի կողմից իր միջոցներով:					

պայմանագրի անբաժանելի մաս է կազմում ծավալաթերթ-նախահաշիվը (կցվում է):

Սույն պայմանագրով աշխատանքի կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը սահմանվում է կազմն 45 օրացուցային օր:

Կատարողը պարտավոր է շինարարական ապրանքների, սարքավորումների և կատարած աշխատանքների համար տալ նվազագույնը 12 ամիս երաշխիք:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011021962
00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
_____ Անի Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

„ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍԾԻՆ„ ՍՊԸ
Ք. Երևան, Կ. Ուլնեցու փ. 59/5, տար. 9,
Հ/Հ 2473604386150050,
Արդշինբանկ ՓԲԸ,
ՀՎՀՀ 02266448,

Գլխավոր տնօրեն՝
_____ Գրիգոր Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության վարչական շենքին կից բակային կանաչապատ տարածքի ոռոգման համակարգի վերակառուցման և նորոգման աշխատանքներ

Հ/Հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Արժեքը դրամով	Գումարը դրամով	Կշիռ (տոկոս)
1	Պլաստմասե ջրի տարա՝ բաք 10տ	հատ	1	723000	723000	
2	POL փական 2" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն փական)	հատ	1	15300	15300	
3	Ֆիլտր 2" սկավառակային	հատ	1	31109	31109	
4	Միացում 50-2" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն փոխակերպիչ)	հատ	4	5490	21960	
5	Ավտոմատ կարգավորող սարք 1" (pedrollo easypress էլեկտրոնային միաֆազ էլեկտրական սարք ջրի բացակայության դեպքում պոմպերի միացման և անջատման համար)	հատ	1	44000	44000	
6	Ավտոմատ անջատիչ 12 գոտի (անջատիչ նախատեսված է մինչև 12 գոտի կարգավորելու համար)	հատ	1	100000	100000	
7	Հակադարձ փական 2"	հատ	1	15555	15555	
8	Պոմպ Q=100-200 լ/ր, H=70-40 մ	հատ	1	235000	235000	
9	PE խողովակ D=50 (PN10 խողովակ բարձր խտությամբ պոլիէթիլենից PE100)	մ	700	660	462000	
10	PE խողովակ D=32 (PN10 խողովակ բարձր խտությամբ պոլիէթիլենից PE100)	մ	600	490	294000	
11	PE խողովակ D=25 (PN10 խողովակ բարձր խտությամբ պոլիէթիլենից PE100)	մ	350	380	133000	
12	PE խողովակ D=20 (PN10 խողովակ բարձր խտությամբ պոլիէթիլենից PE100)	մ	1000	250	250000	
13	PE խողովակ D=16 (30սմ հեռավորությամբ գործարանային 1,8լ/ժ թողունակությամբ կաթոցիկներով խողովակ)	մ	1800	300	540000	
14	PE անկյունակ D=50 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	48	2000	96000	
15	PE անկյունակ D=32 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	48	800	38400	

16	PE անկյունակ D=25 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	21	1100	23100	
17	PE անկյունակ D=20 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	98	1000	98000	
18	PE եռաբաշխիչ D=50 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	28	3100	86800	
19	PE եռաբաշխիչ D=32 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	50	1700	85000	
20	PE եռաբաշխիչ D=25 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	23	1647	37881	
21	PE եռաբաշխիչ D=20 մմ (պոլիէթիլենային խողովակի եռակցվող կցամաս)	հատ	135	1200	162000	
22	PE անցում D=32—25 (պոլիէթիլենային խողովակի եռակցվող փոխակերպիչ)	հատ	74	1300	96200	
23	PE անցում D=25—20 (պոլիէթիլենային խողովակի եռակցվող փոխակերպիչ)	հատ	71	800	56800	
24	POL գոտի 50-1" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն փոխակերպիչ)	հատ	12	900	10800	
25	POL գոտի 50-3/4" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն փոխակերպիչ)	հատ	25	900	22500	
26	POL միացում 32-1" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն փոխակերպիչ)	հատ	38	549	20862	
27	Ավտոմատ կափույր (սոլենոիդ էլեկտրամագնիսական փական)	հատ	12	14000	168000	
28	POL տուփ ավտոմատ կափույրների, երկտեղ (30*40 սմ չափսի պլաստմասե տուփ)	հատ	6	16836	101016	
29	POL անկյունակ D=20-1/2" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն կցամաս)	հատ	133	360	47880	
30	POL եռաբաշխիչ D=20-1/2" (պոլիէթիլենային խողովակի կոմպրեսիոն կցամաս)	հատ	86	350	30100	
31	Հիդրանտ (արագ միացման փական)	հատ	24	7000	168000	
32	Ծնցուղ 6A (ջրելու շառավիղ 1,8 մ, առաջարկվող գործառնական ճնշումէ 2,1 մթն., ջրում ցանկացած անկյան տակ, ջրման շառավիղը 25% նվազեցնելու հնարավորությամբ)	հատ	39	2300	89700	

33	Ցնցուղ 8A (ջրելու շառավիղ 2,4 մ, առաջարկվող գործառնական ճնշումէ 2,1 մթն., ջրում ցանկացած անկյան տակ, ջրման շառավիղը 25% նվազեցնելու հնարավորությամբ)	հատ	31	2300	71300	
34	Ցնցուղ 10A (ջրելու շառավիղ 3 մ, առաջարկվող գործառնական ճնշումէ 2,1 մթն., ջրում ցանկացած անկյան տակ, ջրման շառավիղը 25% նվազեցնելու հնարավորությամբ)	հատ	13	2300	29900	
35	Ցնցուղ 12A (ջրելու շառավիղ 3,7 մ, առաջարկվող գործառնական ճնշումէ 2,1 մթն., ջրում ցանկացած անկյան տակ, ջրման շառավիղը 25% նվազեցնելու հնարավորությամբ)	հատ	136	2300	312800	
36	Հաղորդալար 2*1,5 մմ2	մ	3570	150	535500	
37	Գոֆրե խողովակ 16 մմ (հաղորդալարերի պաշտպանիչ խողովակ)	մ	3570	80	285600	
38	Անցում շտուցեր 16 մմ-1/2 (պոլիէթիլենային խողովակի կցամաս)	հատ	27	183	4941	
39	Անկյուն շտուցեր 16 մմ (պոլիէթիլենային խողովակի կցամաս)	հատ	195	183	35685	
40	Եռաբաշխիչ շտուցեր 16 մմ (պոլիէթիլենային խողովակի կցամաս)	հատ	225	219.6	49410	
41	Արհեստական թելից հյուսվածք	հատ	200	150	30000	
42	Խիճ	պարկ	12	1098	13176	
	Ընդամենը նյութածախս, ՀՀ դրամ				5672275	
	Ընդամենը նյութածախս					**68.7**
43	Խողովակների անցկացման փոսորակների փորում 20-30 սմ	գծ.մ	1125	185	208125	
44	Խողովակների փոսորակների հետլիցք	գծ.մ	1125	200	225000	
45	Ցնցուղների, հիդրանտների տեղադրման աշխատանքներ	հատ	219	300	65700	
46	Բաքի տեղադրում	հատ	1	55000	55000	
47	Պոմպի տեղադրում	հատ	1	15000	15000	
48	Էլեկտրամագնիսական կափույրների տեղադրում	հատ	12	1000	12000	
49	Այլ անհրաժեշտ աշխատանքներ	հատ	1	6000	6000	
	Ընդամենը աշխատանքներ, ՀՀդրամ				586825	
	Ընդամենը աշխատանքներ					**7.1**
	ԸՆԴԱՄԵՆԸ				6259100	
	Շահույթ	**10%**			625910	
	Ընդամենը				6885010	
	ԱԱՀ	**20%**			1377002	
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8262012**	
	Ընդամենը այլ ծախսեր					**24.2**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900011021962 00183253 Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Անի Բաղդասարյան /ստորագրություն/ Կ.Տ	ԿԱՏԱՐՈՂ «ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍԾԻՆ» ՍՊԸ Ք. Երևան, Կ. Ուլնեցու փ. 59/5, տար. 9, Հ/Հ 2473604386150050, «Արդշինբանկ» ՓԲԸ, ՀՎՀՀ 02266448, Գլխավոր տնօրեն՝ Գրիգոր Սեդրակյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
08.06 2020 թ. կնքված
,ՊԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/01,, ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ. ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	45241160/1	Ոռոգման համակարգի վերակառուցման և նորոգման աշխատանքներ						4950000	7435000	7435000	7435000	8262012	8262012	8262012	8262012

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011021962
00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝
_____ Անի Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
,,ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍԾԻՆ,, ՍՊԸ
Ք. Երևան, Կ. Ուլնեցու փ. 59/5, տար. 9,
Հ/Հ 2473604386150050,
,Արդշինբանկ ՓԲԸ,
ՀՎՀՀ 02266448,

Գլխավոր տնօրեն՝
_____ Գրիգոր Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
2020թ. կնքված
,, ՊԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/01,, ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

, , 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ ,_____ 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ , , , 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
2020թ. կնքված
,, ՊԿԾ-ԳՀԱՇՀԲ-20/01,, ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց
	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն